

ԴԱՐՍԼԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ*)

Թէշիշքեանդից 7 վերստ հեռաւորութեամբ դէպի արևելք գանւումէ Մալիշկեա զիւլը, որը 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էր 128 տուն, իսկ այժմ 160 տուն։ Մալիշկեան ունէ 1298 հոգի, որոնցից 771 արական են, իսկ ծ27 իգական։ Մալիշկեա—նշանակում է մհալի (գաւառի) աչքը։ Այդ գիւղը Թէշիշքեանդից յետոյ երկրորդ կենարոնական գիւղն է Դարալագեանդի և այդ անունը ժառանգել է իսկապէս իւր գրախտանման այգիների շնորհիւ։ Այդ այգիները առատապէս ոռոգում են այն պայծառ և քաղցրահամ աղբիւրներով, որոնք թափում են Մալիշկեան արևմտեան կողմից շրջապատող ժայռի բոլոր շարունակութիւններից։ Այստեղ ձմեռները խաղողի այգիները չեն թաղում, որովհետեւ ցուրտը չէ տանում։ Դժբախտաբար թէ այգիների մշակելու և թէ գինի պատրաստելու մէջ ոչ մի փոփոխութիւն, նորութիւն չէ առաջացել։ Չալթուկը և բամբակը մալիշկեցիները շատ բիչ են ցանում, գրեթէ անշան, այն էլ Արփաչայի ափին, որտեղ միայն յարմար է սորա համար։ Վարելահողերը գտնում են գիւղից վերև արևելահիւսիսային կողմը, Աղդաղ և Փաշաղուզ անունով հանդերում, որոնք կազմում են «Թափասի-դալիկ» լեռան ստորոտները և շարունակութիւնը։ Այդ հողերը թէն խիստ քարքարոտ են և աւագուա այնպէս, որ երբ տարին անձրևային Է՝ 1—5 արդիւնք են տալիս, իսկ երբ երաշտ՝ արդիւնքը իշնում է 1—3 և մինչև անգամ ցանած սերմն էլ չէ ստացում։ Թէ այգիների բերքով և թէ հողից ստացած արդիւնքով մալիշկեցիները հայթայթելով իրանց տնտեսական դրութիւնը աւելի ապահով պայմանների մէջ են ապրում, քան թէ թէշիշքեանդցին, օրթաքեանդցին և քաշիշքեանդցին, որովհետեւ առանց մշակութեան և պանդխտութեան դիմելու մալիշկեցիները կարող են գլուխ պահել, իսկ յիշեալ գիւղերը չեն կարող, ըստ որում սրանց նիւթական դը-

*) Տես «Մուլճ», № 9.

բութիւնը համահաւասար է զօյթուլցիներին։ Մալիշկեցիները գաղթած են Պարսկաստանի Սալմաստ գաւառից ու խօսում են սալմաստցիների լեզուվ որով խօսում են բոլոր Դարալագեաղի հայերը (բացի հինգ գիւղերից, որոնց մասին յետոյ կը խօսենք)։ Բնակիչները ժիր, առողջ, զուարթ և վայելչակազմ մարդիկ են թէ արական և թէ իրական սեռը։ Դրագիտառթեան կողմից եղլրորդն են Բաշքեանդից յետոյ։ Մինչև այսօր սպանութեան դէպքեր և ծանր վիրաւորութիւններ տեղի չեն ունեցել այդ գիւղում։ Ինչ էլ որ լինի, ինչ տեսակ խռովութիւն պատահէ իրանց մէջ, երբ տեսան մալիշկեցիները բանը վատ է գնում դատաստանատներում, իսկոյն գործը հաշտութեամբ կը վերջացնեն։ սորանից է, որ չի պատահել գեռս որ մալիշկեցիները ամիսներով իրար բանտար նատացնել տան։ Միայն մի վատ սովորութիւն ունին, ինչպէս և շատ հայ գիւղերում, որ երբէք հասարակութեան օգտին խորհել ու գործել չգիտեն, այնպէս, որ օակաւաթիւ հարեւան թուրք գիւղերը անցնելով իրանց հողերի սահմանագիծը, խլում են մալիշկեցիների վարելահողերը մինչև անգամ նրանց «Ղարամա» անունով հողաբաժինը, որը կազմում է նոցա ամառանոցը։ Գինդարայ գիւղերը թուրքերը մինչև մալիշկեցիների օբայի վրանների դաները տիրել են, բայց չի եղել որ մի օր մալիշկեցիները գոնսգատուեն իշխանութեանը հաւաքուելով ու խորհրդածելով միասին այդ չարիքի առաջն առնելու, թէև ունին էլ սահմանագծական ատեանից Ղարամայի պլանը։

Արփաչայի ձախ կողմը, Մողրով լեռան փէշերում, Քեշիշ-քեանդից դէպի հարաւ 12 վերստ հեռաւորութեան վրայ դըրուած է Ենկիջա գիւղը, որ 1886 թուի ընտանեկան ցուցակով կազմում էր 40 տուն, այժմ 50 տուն։ Ունի 583 հոգի բնակիչ, որոնցից 326 արական են, 257 իգական։ Ենկիջան բոլորովին մերկ ու գուրկ է խաղողի այգիներից ու ծառերից ջուր չունենալու պատճառով՝ գիւղի շուրջը կան միայն միքանի ծառատունկներ, որոնք բուսել են այն մասը աղբիւրների ջրերով, որոնցով գյոյութիւն ունեն ենկիջեցիները։ Բոլոր հողերը անջրգի են։ Անտաւաների բնաջինն անելուց յետոյ վարելահողերը հետքզետե ողողուում են ու բացում իրանց տակի ժայռերի կըրծքերն այնպէս, որ շատ չի անիլ վարելահողերի փոխանակ են։ Կենչեցիների բաժինը քար ու ապառաժ կը մնայ։ Նոյնիսկ այդ վարելահողերն էլ շատ սակաւ են և այդ քչութիւնը օրէցօր աւելի զգալի է դառնում, որով ենկիջեցիները ստիպուած են հերկել և ցանել վարելահողերի մէջ գտնուած այն կոշտ հողերը, որտեղ արածում են իրանց բանուոր անասունները և մնա-

ցած տաւար ու ոչխարը։ Անձար մնալով նրանք քշում են իրանց անսառնները Այսր գիւղի սահմաններն արածացնում։ այդ ինարկէ առանց կռուի ու «ակտեր կազմելու» չէ վերջանում։ Բացի այդ վարձում են երեք վերստ հեռաւորութեան վրայ գտնուող Նուրդ-ղուլաղ գիւղի թուրքերից արօտատեղիներ ու այստեղ տանում իրանց աաւարը ու ոչխարը, այնպէս, որ երբ գարնանը պատահէք Ղուրդ-ղուլաղ թուրք գիւղում կը տեսնէք 4—5 հայ ընտանիքներ առաւելապէս կանայք, որոնք տեղաւորուելով կամ վրաններում, կամ տների մէջ, գըլուխ են պահում մի կերպով իրանց անսառնները կերակրելու համար։ Սյդ էլ անում են ունեորները, իսկ ենկիջեցիների մընացած մասը տառապում է։ Բացի այդ ենկիջեցիները չունեն նաև ամառուայ համար արօտատեղիներ, այս պատճառուն նոցախեղն կանայք հարկադրուած են թափառել Շորջայ, Գեօյաբաս, Հորբագլ և այլ թուրք գիւղերի օքաներում, խնամել իրանց հօտերը, իւղ ու պանիր հաւաքել և աշնանը նորից խմբուել ենկիջա։ Թէ որքան դառն հետեւանքներ ունի այդ հանգամանքը բարոյական տեսակէտից դժուար չէ հասկանալ... Մի ժամանակ կարող էին ենկիջեցիները արօտատեղի ձեռք բերել։ Այն ժամանակ այդ գիւղի հարուստները կարծում էին թէ իրանք աղատօրէն և միշտ կը հիւրասիրուեն թուրքերից, մնացածներն էլ ինչ լինում են թող լինեն, այժմ նոր են զարթներ բայց ուշէ, հիմա են կրկնում թէ, «թուրքերը սորա համար են ասել մեզ «էրմանին սորաքի աղի», հայի վերջին խելքն է գովելի»։

Տնտեսական այդպիսի անյաջող պայմանների մէջ գըտնուող ենկիջեցիների երիտասարդները ցիրուցան լինելով Բագու և Թիֆլիս քաղաքներում բաւականին գումարներ են մտցնում իրանց գիւղը, այնպէս, որ այժմ ենկիջեցիների նիւթական դրութինը վատ չէ, ենկիջեցիները պարտգեր չունեն, լծկան ունեն, հաց ունեն, ունեն նաև ծախու համար ցորեն և գարի։ Ունեն մի եկեղեցի գիւղը հիմնած օրից մինչև այսօր չունեն քահանայ, բաւականանալով ուրիշ գիւղերի երթեեկ քահանաներով, տիրացու չունենալու պատճառով։ 583 հոգուց միայն 4 հոգի գրագէտներ կան ենկիջալայում, այն էլ իրանց անունն են միայն ստորագրել կարողանում։ Ենկիջայի բնակիչները առողջ մարդիկ են և ժիր մշակութեան համար։ Հաղորդակցութեան ճանապարհները միւս գիւղերի հետ դժուարին է և կարելի է միայն գրաստներով։ Ենկիջայ նշանակում է՝ «իջևանիր գիշերը»։ այդ անունը ստացել է այն պատճառով, որ անծանօթ մարդը գիշերը ենկիջայից դէպի Քէշիշքեանդ Այար կտմ այլ

գիւղեր գնալով կարող է անդունդը նետուել ժայռերից, որի համար էլ արդարև պէտք է պարտաւորուած իջևանէ գիշերն են-կիջայում:

Դայլախլուն դրուած է այն խաչաձև ճանապարհների վրայ, որոնցից մէկը տանում է դէպի Գնդևազու շինական հասարակութիւնը, իսկ միւսը Դարալագեազի հիւսիսային մասի միքանի գիւղերից դէպի Մարտիրոսու շինական հասարակութիւնը և Նախիջևանայ գաւառը: Տասնեչորս տարի սրանից առաջ այդ գիւղում թուրքեր էին բնակւում, բաղկացած 12 տանից, որոնք գիշեր-ցերեկ պարագելով գողութեամբ, համարեա թէ աւելի էին շրջակայ գիւղերը: Ինչ տաւար ու ոչխար այստեղ ընկնէր, էլ տէրը չէր գանիլ, այսպէս էր կորչում այստեղ «ինչպէս կորեկը մէջ վարին», և այդ առածի ձև էր ստացած: Աւելի սարսափելի էին բնակիչների համար Նաւրուզ ուշաղիները (Նաւրուզի որդիքը), որոնցից երկուսը աքսորուեցին Սիրիք իրանց կատարած ոճագործութիւնների համար, բայց էլի չնանգստացան այնքան, մինչև որ իրանց համարնակիչ թուրքերի հետ բռնուեցին կոռուի ամեն մի ընդհարումը վերջացնելով արխւահեղութեամբ այն տեղը հասցըեցին, որ յաղթուած կողմից 10 տուն խոհեմութիւն համարեցին տեղի տալ և Նաւրուզ ուշաղիներից ազատուելու համար տեղափոխուել Գնդեւազու հասարակութեան Լէյլի-կաչան գիւղը, իսկ իրանց համախօսականով ընդունեցին իրանց տեղ Ազատակ գիւղի հայերից 10 տուն, որից յետոյ կայացաւ թէ առաջինների և թէ վերջինների տեղափոխուելը իրանց նշանակուած տեղերը Թիֆլիզի արքունական Պալատի 1890 թ. դեկտեմբերի 29. №12179 հրամանով,

Դայլախլուն բաժանւում է երկու մասերի վերին Դայլախլուն և Ներքին Դայլախլուն իրարից երկու վերստ հեռաւորութեամբ: Առաջնում բնակւում են այժմեան հաշուելով 13 տուն զուտ հայեր, իսկ երկրորդում երկու տուն հայեր և երեք տուն էլ Նաւրուզ ուշաղիները: Հայերի բնակած օրից խաղաղութիւնը և կարգը տիրում է Դայլախլուում, մանաւանդ, որ Նաւրուզի յափշտակող, կտրիճ և արիւնարբու որդիներից երկուսը Սիրիքում մահացան, երկուսը մեռել են, մնացած երեքն էլ մեղմել են իրանց ընթացքը, թէն էլի երբեմն-երբեմն կոււներ են սարքում հայերի հետ, որի համար էլ հայերը ճգնում են թուրքերի հողերը ջոկել իրանց հողերից, առանձին տեղ տալ թուրքերին վերջիններիս յօժարակամ ընտրութեամբ, որպէսզի հայերի երկրագործական գործիքները և այլ ունեցածները նրանց գողութեան բաժին չդառնան:

Այդ գիւղի վարելահողիը անջրդի են և սեահող, անձրեւային տարին մէկին 7—8 արդիւնք են տալիս և կարելի է ասել թէ հացի, ցորնի ու գարու շտեմարան է Դայլախլուն թէ իր բնակիչների և թէ հարևան գիւղերի համար: Նոյնիսկ երկու թուրք տները, որոնք 5—6 տուն են դարձել, հետեւլով հայերին, սկսել են ճանաչել արօրի (վեցկու) մաճը, հողը քաղցրացի է նոցա աչքին ու սկսել են պայքար մտնել հայերի հետ երկարործութեան մէջ մրցել և վիճել իրար հետ վարելահողերի համար: Վերին և ներքին Դայլախլուն ամեն մէկն ունի մի բարակ աղբիւր:

Դայլախլուն գտնուամ է 12—13 վերստ հեռաւորութեան վրայ Թէշիշքեանդից և վեց վերստ Մալիշկեա գիւղից, որը թէև կերպարանափոխուել է և կերպարանափոխուամ է, բայց դեռևս ցանկալի կերպով հայկական մշակութեան չէ ենթարկուել. չունեն նոյնպէս դայլախլուեցիները դեռևս ոչ եկեղեցի և ոչ քահանայ: Դայլախլուն ունի 126 բնակիչ, որոնցից 76 արական են, իսկ 50 իգական:

Արփաչայի ձախ ափին գրուած է Այար գիւղը, Թէշիշքեանդից երեք վերստ հեռաւորութեամբ: Այդ գիւղը Դարալազեաղի արդաւանդ գիւղերից մէկն է և շատ յարմար թէ երկրութործութեան, թէ այգեգործութեան և թէ անապնապահութեան համար: Բամբակը և բրինձը նոյնպէս ցանկալի արդիւնք են տալիս այստեղ. առույրը և կորինկան երեք անգամ են հնձնուամ այստեղ, բայց չնայելով այդ տնտեսականութեան համար յարմար պայմաններին, այրցիները աղքատ են և փոխանակ հետզհետէ բազմանալուն՝ ընդհակառակը նուազում են: Այրցիների այդ դժբախտութեան գլխաւոր պատճառը երկու բան է, այն է, խմելու ջուրը և օդը: Այդ ջուրը սկզբում մաքուր ջուր էր, սակայն ենկիշա ու Ղուրդ-ղուլաղ գիւղերը տանող ճանապարհի վերջում այրցիների խմելու ջրին խառնըւում է բաւականին մեծութեամբ մի հանքային աղբիւր իր աղի ջրով «գուաւ» անունով (քոսի ջուր) որը իսկոյն փոխում է ջրի համը աղի դարձնում, դեղին տաթ կապելով գեղնագոյն յատակում: Թէ որ աստիճանի վասակար է այդ ջուրը, առաջ եմ բերում հետեւալ փաստը: Այդ ջրով Այրում բանում է մի ջրաղաց, որի ջրուումը ամբողջապէս սալացել է, միապաղաղ քար դարձել: Ինչ վերաբերում է օդին, սա էլ հետեւալ կերպով է իր կորուատն առաջացնում: Այսրը շրջապատուած լինելով լեռներով, գտնուամ է հորի նման մի հովտում, որտեղ օդը իր հոսանքն ու շարժումը չունէ այդ փակուած դիրքի մէջ և երբ ամառնային ժամանակ բարձրանում է չալթուիների լը-

ճակների գոլորշին, ամպի նման կանգնում է, նեխուում է ու իր մոծակների, ճանճերի լեզիօններով պաշարում է շոգի և անքը-նութեան մէջ տառապող այարցուն, թուլացնում նրան մինչև օգոստոս ամիսը, որից յետոյ սկսում է այարցու տենդային և տարափոխիկ հիւանդութիւնների շրջանը: Այս հիւանդութիւնների շնորհիւ Այարը գրեթէ աւերակ է դառել: Ծեր և ալեխանն մարդիկ այստեղ չէք գտնիլ: Տներ կան որ բնաշինջ են եղել: Զնայելով որ չալթուկը սաստիկ քսնակութեամբ զոհեր է տարել այդ գիւղից, բայց և այնպէս այարցիները լամառութեամբ թէ կուրութեամբ չեն դադարում չալթուկ ցանելուց: Ոչ ճարևան գիւղերի արհամարհանքը, ծաղը և յանդիմանութիւնը, ոչ իրանց և զաւակների կեանքի կորուստը յետ չեն կանգնացնում նրանց այդ վնասակար պարապմունքից: Փորձուած է, որ տարին Այարցիները շատ են ցանել չալթուկը, այն տարին ունեցել են սաստիկ կոտորած: 1889 թուին այքան ցանեցին չալթուկը, որ միայն գիւղի տեղը մնաց, այդ տարին եղաւ նոցա մեծ կոտորումը: Երբ հասաւ աշունը, դագալներից մէկը միւսին հերթ չէր տալիս եկեղեցում, շատ անզամ դագաղը տանող էլ չէր լինում, որովհետև առողջ մարդ չկար, ուրիշ գիւղերից էլ մօտ չէին գտալիս: Մինչև 1889 թիւը լրացաւ 33 տանից 26 հոգի մեռան, բայց այարցիներն էլի չխրատուեցին: Այնպէս կոտորած ունեցած տարիները երդում են, ածէք են դնում, որ էլ չալթուկ չցանեն, բայց անցնում է 3—4 տարի, մոռանում են իրանց կրած անբախտութիւնը, յանկարծ սկսում է մէկը ցանել չալթուկը, յետոյ միւսը և հետզհետէ բոլորը: Այս է պատճառը, որ 1873 թուի աշխարհագրից մինչև 1886 թուի ընտանիկան ցուցակները կազմելը Այարից պակասել են 6 տուն, իսկ մինչև այժմ ութ տուն փոխանակ շատանալու: 1890 թուին պրիստաւ Յ. Անդրէասիանցը գարնանը, չալթուկ ցանելու ժամանակ եկաւ Այար և չնայելով որ գիւղացիներից մի քանիսը ընդիմացան ու գոչում էին. «Աղա, քլֆաթներիս խացը կը կուս, Աստըծու խաթը խմա տներս կ'աւրես», պատուիրեց որ չալթուկ չցանեն, որից յետոյ այարցիները մինչև 1901 թիւը դադարեցին չալթուկ ցանելուց, բայց այս թուից յետոյ էլի շարունակ ցանում են կրկնապատկելով զոհերի թիւը:

Այարը բաղկացած է այժմ 45 տանից. ունի 317 բնակիչ, որոնցից 160 արական են և 157 իգական. սորանցից 7 հոգի կան միայն գրագէտ: Անցեալ տարուանից չունեն քահանայ: Թէկ այարցիների շատ անշան մասն է հաց ծախ առնում, բայց բոլորն էլ աղքատ են, այնպէս, որ 100 ըուբէի դրամագլուխ ունեցող չէք գտիլ այստեղ: Ամառուայ համար ու-

նեն մի ամառանոց, արօտատեղի անասունների համար, որը այնքան թիչ տարածութիւն ունի, որ մի ամիս հազիւ է բաւականացնում նրանց անասուններին, ուստի այարցիներն ըստիպուած են կամ Այարի շոգին ու կրակին յանձնել իրանց ընտանիքն ու անասունները, կամ թանդ գնով Ղարաւանք գիւղի թիւրքերից արօտատեղիներ ծախ առնել և ամառն անց կացնել:

Մ. Տ.-Ա.

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ *)

I

Ամբոխային կեանքի համար երբեմն լաւ և երբեմն վատ այնքան կարծիքներ են լսում, որ արժէ աւելի մօտիկից ճանաչել ամբոխին և մի հաստատ գաղափար կազմել նրա շարժումների ու հոգեբանութեան մասին:

Նախքան այդ՝ անհրաժեշտ է իմանալ, թէ ամըոխ ասելով թիջնէ ենք հասկանալու:

Մարդկային զանազան համախմբումներին տալիս ենք զանազան անուններ.—ասում ենք՝ ընտանիք, ընկերութիւն, հասարակութիւն, ժողովուրդ, ազգ և այլն։ Սրանցից իւրաքանչիւր խումբ կազմող մարդիկ կամ անհատները միմեանց հետ կապուած են ամուր և մշտապէս։ Այդ ամուր և մշտապէս կապակցութիւնը առաջ է դալիս անհատների զգացմունքների, ձգտումների, տնտեսական ու հասարակական վիճակի գլխաւոր կէտերի միակերպութիւնից։ Պարզ է, որ առանց դրանց չէին կարող գոյութիւն ունենալ ոչ ընտանիք, ոչ ընկերութիւն, ոչ համայնք, ոչ ժողովուրդ, ոչ ազգ և այլն։ Վաղ թէ ուշ նրանք կը կազմակուծուէին, կը քայլայուէին։ Այդ համախմբումների կազմութեան համար ապատճառ պէտք է լինէին էական կէտերով միատեսակ հոգեկան արտայայտութիւններ, միատեսակ

*) Կազմելիս ի նկատի եմ ոմեցել «Преступная толпа» С. Сигеле, 2-ое изд. пр. Павленкова, С.-Петербургъ, 1896 г. Ցեղ-տեղ կան ազատ թարդմանածներ։ Միզնելին իռալացի հեղինակ է։